ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՅԳՈՒ ՀԻՄՆՈՒՄԸ ՄԱՔՐԱՍՈՐՏ ՏՆԿԱՆՅՈՒԹԵՐՈՎ

Արտադրական պտղատու այգիների հիմնման գործում մեծ կարևորություն է տրվում մաքրասորտ տնկանյութերով տնկարկների հիմնմանը: Այդ գործի ճիշտ կազմակերպման և իրականացման համար, շատ կարևոր է տնկարկներին կից ունենալ մաքրասորտ մայրուտ այգիներ, որտեղից պատրաստի համար մթերվում են կտրոններ:

Մայրուտը հիմնելիս ցանկալի է սորտերը տնկել առանձին շարքերով, ըստ հասունացման ժամկետների, քանի որ այդ տիպի այգիներից կտրոնները մթերվում են մինչև ծառերի բերքատվության անցնելը, իսկ հիմնականում անհրաժեշտ է կտրոններ մթերել նախօրոք ապրոբացված բերքատու ծառերից: Մաքրասորտության ապահովման երաշխիք է հանդիսանում տնկարանի դաշտային մատյանում պատրաստի ժամանակ ըստ շարքերի կատարված գրանցումները՝ տեսակի, սորտի և պատվաստակալի վերաբերյալ:

Մաքրասորտ տնկանյութով այգիներ հիմնելու համար կարևորվում է նաև տնկիների ապրոբացիան տնկարանում, որն իրականացվում է տնկանյութը հանելուց 1.5-2.5 ամիս առաջ: Ապրոբացիայի ընթացքում, ըստ շարքերի, ստուգվում է տնկիների մաքրասորտությունը և կատարվում մորֆոլոգիական հատկությունների բնութագրում՝ տերևների ձևն ու թավոտությունը, շիվերի գույնը, թավոտությունը, վերերկրյա մասի աճեցողությունը: Ապրոբացիայի ընթացքում հիվանդ և խառնուրդ տնկիները խոտանվում են:

Տնկանյութը բաց թողնելիս պարտադիր պետք է գնորդին տրվի սորտային վկայական, որտեղ նշվում է տեսակը, սորտը, պատվաստակալը և տնկանյութի որակական ցուցանիշները, համաձայն հանրապետությունում սահմանված ստանդարտի:

Տնկանյութի որակի և մաքրասորտության համար արտադրության համար արտադրողը պատասխանատու է: Դա կնպաստի խուսափելու խառը և տվյալ գոտու համար ոչ տիպիկ շրջանացված սորտերով այգիներ հիմնելուն:

Ոչ մաքրասորտ և խառը տիպի տնկարկներում ի հայտ են գալիս մի շարք թերություններ:

1. Չի պահպանվում տվյալ գոտու համար շրջանացված ստանդարտ սորտային կազմը,
2. Հնարավոր չէ պլանավորել բերքատվությունը,
3. Չեն համապատասխանում փոշոտվող և փոշոտիչ սորտերի նկատմամբ ներկայացված պահանջները,
   - Փոշոտվողի և փոշոտիչի ծաղկման ժամկետների համընկնումը:
   - Միաժամանակյա բերքատվության մեջ մտնելը, միանման երկարակեցությունը, միմյանց փոխադարձաբար փոշոտումը:

4. Արդարացված չէ բերքի նպատակային օգտագործումը,
5. Խախտվում են սպասվելիք բերքի քանակական և որակական ցուցանիշները,
6. Չի ապահովում այգուց սպասվող նախորոք կանխատեսված շահույթը և կատարված ծախսերը ժամանակին ու ըստ պահանջի չեն փոխհատուցվում: